# «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի հրապարակային առաջարկի շրջանակում բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության կարգը

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը կսկսվի դեկտեմբերի 2-ին և կտևի մինչև դեկտեմբերի 22-ը: Բաժանորդագրությանը կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ:

Բաժանորդագրությանը մասնակցելու համար անհրաժեշտ է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյակ (ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10) ներկայացնել բաժանորդագրության հայտ (*բաժանորդագրության հայտ ֆիզիկական անձանց համար*, *բաժանորդագրության հայտ իրավաբանական անձանց համար*): Հայտերը կարող են ներկայացվել փոստով, կապի այլ միջոցներով, ինչպես նաև առձեռն եղանակով տեղաբաշխման ընթացքում ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00-ին:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը կարող է ներկայացվել նաև Ընկերության գրասենյակ (հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան փողոց 10, հեռախոս՝ (047) 97 42 14, (097) 27 71 17, Էլ. փոստ՝ artsakhhek@mail.ru, www.artsakhhpp.com):

Բաժնետոմսերի ձեռք բերման համար վճարումը պետք է կատարվի «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 2500036910046100 բանկային հաշվին անկանխիկ եղանակով փոխանցելու միջոցով: Ֆիզիկակական անձինք կարող են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրասենյանկում վճարումը կատարել կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով վճարելու դեպքում ներդրողը բաժանորդագրության հայտին կից պետք է ներկայացնի իր անձնագրի պատճենը:

Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության շրջանակում ներդրողը բաժնետոմսերի դիմաց վճարումը հիմնավորող փաստաթուղթը պետք է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ներկայացնի բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի հետ միասին, բայց ոչ ուշ, քան դեկտեմբերի 22-ը:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ընդունումը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից մերժվում է, եթե.

1) Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտը ներկայացված չէ սահմանված ձևին համապատասխան և լրացված է ոչ լիարժեք,
2) Չի ներկայացվել բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը,
3) թույլ չի տալիս նույնականացնել բաժնետոմսեր ձեռք բերող անձին,
4) ներկայացվել է դեկտեմբերի 22-ից հետո:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտերը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից ընդունվելուց հետո ներդրողը 1 աշխատանքային օրվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող է գրավոր եղանակով ամբողջությամբ կամ մասնակի հետկանչել իրենց բաժանորդագրությունը: Երբ ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նրա կողմից պետք է ներկայացվի նոր հայտ:

Բաժանորդագրության ընթացքում եթե տեղի է ունեցել բաժնետոմսերի գերբաժանորդագրություն, ապա հայտերը բավարարվում են ըստ ներկայացման առաջնահերթության: Իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված բաժանորդագրության հայտերում ձեռքբերվող բաժնետոմսերի ծավալը գերազանցում է չտեղաբաշխված (չվաճառված) բաժնետոմսերի ծավալին, ապա հայտերը բավարարվում են մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության:

Բաժնետոմսերի բաժանորդագրության հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետկանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, նշված գումարը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա է վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (բաժանորդագրության հայտում ներդրողի կողմից նշված բանկային ռեկվիզիտներով):

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ կամ կապ հաստատել.

ՀՀ, ք.Երևան, 0010 Վ. Սարգսյան փ. 10,
Հեռախոս՝ (374 10) 54 07 82, 52 95 93 (111),
Ֆաքս: (374 10) 52 95 91,
info@armswissbank.am